



DOI: 10.59560/18291155-2025.1-42

### ԱՐԱՄ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ

«ՋԵՅ-ՓԻ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»

ՍՊԸ հիմնադիր,

ՀՀ Փաստաբանների պալատի

անդամ, փաստաբան,

իրավաբանական գիտությունների թեկնածու



### ՀԱԿՈՐ ԿՈՒՐԵՂՅԱՆ

«ՋԵՅ-ՓԻ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»

ՍՊԸ իրավաբան,

Հայաստանում ֆրանսիական

համալսարանի շրջանավարտ,

ՀՀ Փաստաբանական ակադեմիայի ունկնդիր

## ԱՅԼ ԱՆՁԻ ՎԱՐՔԱԳԻԾԸ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՆԿԱՏՄԱՐԻ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՒՄ ԴՆԵԼՈՒ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ

### Ամփոփագիր

Հոդվածի շրջանակներում քննարկման առարկա է դարձվում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման իրավաչափությունն այն դեպքերում, երբ խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը հիմնավորվում է ոչ թե մեղադրյալի, այլ մեկ այլ անձի վարքագծով: Գտնելով, որ նման մոտեցումն իրավաչափ չէ և միևնույն ժամանակ նպատակ հետապնդելով բացառելու պրակտիկայում նման իրավիճակները և մեղադրյալի իրավունքների անհարկի սահմանափակումները՝ սույն հոդվածի շրջանակներում ներկայացվում են նման մոտեցման անթույլատրելիությունը հիմնավորող փաստարկները:

Հիմնավորվում է, որ այլ անձի վարքագիծը մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման անհրաժեշտության հիմքում դնելն անթույլատրելի է թե՛ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սկզբունքներին և նորմերին, թե՛ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորո-

1(118)2025

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

շումներին և ՀՀ վճարելի դատարանի նախադեպային իրավունքին, թե՛ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավական որոշակիության և համաչափության սկզբունքներին հակասելու հիմքով:

Համաձայնելով հարցի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի արտահայտած դիրքորոշման հետ և իրավունքի մեկնաբանման իրավահամեմատական, համակարգային և այլ մեթոդների կիրառմամբ զարգացնելով նշված դիրքորոշումը՝ հեղինակները հիմնավորում են, որ այլ անձի վարքագիծը որևէ դեպքում՝ ուղղակի կամ անուղղակի կերպով, չի կարող մեղադրյալի նկատմամբ խափանման կիրառման անհրաժեշտության հիմքում դրվել:

**Հիմնաբառեր.** խափանման միջոց, մեղադրյալի վարքագիծ, որոշակիության սկզբունք, համաչափության սկզբունք:

### Նախաբան

ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի (սույն հոդվածի շրջանակներում նշված վկայակոչումը վերաբերում է 01.07.1998 թ. խմբագրությամբ օրենսգրքին) 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով:

30.06.2021 թ. ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) թեև չի սահմանում խափանման միջոցների հասկացությունը, սակայն Օրենսգրքի համակարգային վերլուծության արդյունքում կարող ենք բխեցնել հետևյալ սահմանումը. խափանման միջոցները հստակ որոշակի նպատակներ հետապնդող քրեադատավարական հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են մեղադրյալի նկատմամբ՝ Օրենսգրքով նախատեսված որոշակի հիմքերի առկայության պարագայում՝ պահպանելով խափանման միջոցների ինչպես ընդհանուր, այնպես էլ դրանցից յուրաքանչյուրի համար առանձին՝ Օրենսգրքով սահմանված իրավաչափության պայմանները:

Այսպես, Օրենսգիրքն առանձնացնում է խափանման միջոցների կիրառմամբ հետապնդվող հետևյալ նպատակները.

- մեղադրյալի փախուստը կանխելը կամ
- մեղադրյալի կողմից հանցանք կատարելը կանխելը կամ
- մեղադրյալի կողմից իր վրա Օրենսգրքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելը:

Կարևոր է փաստել, որ վերը թվարկված՝ խափանման միջոցների կիրառմամբ հետապնդվող նպատակների, ուստիև խափանման միջոցի կիրառման անհրաժեշտության գնահատման հարցում առանցքային նշանակություն ունի նման նպատակի առկայությունը հիմնավորող, որոշակի փաստերի վրա

հիմնված հանգամանքների գնահատումը վարույթն իրականացնող մարմինների կողմից: Բացի այդ, Օրենսգրքի 116-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ խափանման միջոցի տեսակն ընտրելիս հաշվի են առնվում մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող բոլոր հնարավոր հանգամանքները:

Prima facie, տրամաբանական է թվում, որ թե՛ խափանման միջոցների կիրառման անհրաժեշտությունը (նպատակի առկայությունը), թե՛ մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող հանգամանքները պետք է բխեն մեղադրյալի անձից, նրա վարքագծից և հենց նրան վերաբերող քրեական գործի (վարույթի) տվյալներից: Միևնույն ժամանակ, ՀՀ իրավակիրառ պրակտիկայում հանդիպել են դեպքեր, երբ վարույթն իրականացնող մարմին դատարանը որպես մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող հանգամանք, հետևաբար նաև խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը հիմնավորող փաստական տվյալ է գնահատել մեկ այլ՝ մեղադրյալի անձի և անհատականության, ինչպես նաև քրեական գործի հետ որևէ ուղղակի կապ չունեցող հանգամանք:

Օրինակ՝ թիվ ԵՊ1/0994/01/24 քրեական գործով, ըստ մեղադրանքի Սամվել Գագիկի Վարդանյանի, դատարանը, քննելով վերջինիս նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցը, 07.06.2024 թվականի որոշմամբ Սամվել Գագիկի Վարդանյանի նկատմամբ կիրառված տնային կալանք խափանման միջոցի ժամկետը 3 (երեք) ամիս ժամանակով երկարաձգելու անհրաժեշտության հիմքում, ի թիվս այլնի, դրել է հետևյալ եզրահանգումը.

«Ինչ վերաբերվում է օրենքով իր վրա դրված պարտականությունների չկատարման հիմքին՝ ապա Դատարանն արձանագրում է, որ տվյալ դատավարական փուլում, երբ դեռ Դատարանի կողմից հարցաքննված չեն գործով այլ անձիք, մասնավորապես՝ գործով առկա տուժողը և վկան, ուստի առերևույթ առկա է վրանգը առ այն, որ Սամվել Վարդանյանը գտնվելով ազատության մեջ կարող է ապօրինի ազդեցություն գործադրել սույն գործով ներգրավված վերոնշյալ անձանց վրա: Բացի այդ, Դատարանը նման ենթադրության գալիս է այն հանգամանքից, որ մեղադրյալի կողմից կատարված ենթադրյալ արարքները ուղղված չեն եղել տուժողի անձին, այլ պայմանավորված է եղել տուժողի ունեցած քաղաքական հայացքներով, ինչպիսի հանգամանքը փաստում է այն մասին, որ տվյալ դեպքում գործ ունենք երկու հակառակ քաղաքական, գաղափարական բևեռների հեպ, որպիսի հանգամանքը կրկին անգամ փաստում է այն ենթադրությունը, որ մնալով ազատության մեջ մեղադրյալը, ինչպես նաև գաղափարական հակադիր բևեռներում գտնվող անձիք կփորձեն անօրինական ազդեցություն գործադրել վկայի և տուժողի վրա: **Վերոգրյալ հանգամանքը հաստատվում է նաև նրանով, որ դատական նիստի դահլիճից հեռացված մեղադրյալի ազգականի կողմից, դատարանի շենքում, տուժողի նկատմամբ հնչեցվել**

**են որոշակի ամոթանքներ՝ նման կերպ հաստատելով մեղադրյալի և վերջինիս համախոհների հակակրանքը տուժողի նկատմամբ:**

Ստացվում է, որ դատարանն իր վերոգրյալ եզրահանգմամբ մեղադրյալի կողմից իր վրա դրված պարտականությունների չկատարման հիմքի առկայությունը հիմնավորել է մեղադրյալի ազգականի կողմից դրսևորված որոշակի վարքագծով:

Հարց է առաջանում՝ արդյոք ոչ թե անմիջականորեն մեղադրյալի, այլ մեկ այլ անձի վարքագիծը կարող է հիմնավորել մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը:

Թիվ ԵԴ1/0994/01/24 քրեական գործով առաջին ատյանի դատարանի 07.06.2024 թ. որոշումը վերաքննիչ քրեական դատարանի կողմից 22.07.2024 թ. կայացված որոշմամբ մասնակի բեկանվել է, կիրառված խափանման միջոցը՝ փոփոխվել, 07.06.2024 թ. որոշմամբ մեղադրյալի ազգականի վարքագծի գնահատման մասով առաջին ատյանի դատարանի դատողությունները՝ հերքվել: Մասնավորապես, վերաքննիչ դատարանը նշել է. «(...) *Ինչ վերաբերում է մեղադրյալի մոր կողմից տուժողի նկատմամբ ցուցաբերած վարքագիծը մեղադրյալին վերագրելու հանգամանքին, ապա Վերաքննիչ դատարանը ընդունելի չի համարում Առաջին ատյանի դատարանի հետևությունները և փաստում է, որ մեղադրյալի ենթադրաբար կատարած հանցանքի համար նախատեսվող պատժի հիմքը նրա մեղքն է, հետևաբար մեղադրյալի ազգականների կողմից ցուցաբերած վարքագիծը չպիտի որևէ պարժողական նպատակներ հետապնդի մեղադրյալի նկատմամբ (...)*»: Նշված որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի կողմից ներկայացվել էր հատուկ վերանայման բողոք (Վճռաբեկ բողոք), սակայն 21.10.2024 թ. որոշմամբ Վճռաբեկ դատարանը մերժել էր բողոքը վարույթ ընդունելը՝ այդպիսով արձանագրելով վերաքննիչ դատարանի դատական ակտի օրինականությունը: Գտնում ենք, որ սույն հոդվածի շրջանակներում բարձրացված հարցի պատասխանն անհրաժեշտ է քննարկել ավելի մանրամասն՝ քրեադատավարական օրենսդրության և իրավունքի համընդհանուր սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից:

**1) Մեղադրյալի վարքագիծը՝ որպես խափանման միջոցի կիրառման անհրաժեշտության գնահատման աղբյուր**

Օրենսդիրը կալանքի կիրառման անհրաժեշտության դեպքում սահմանել է ապացուցվածության բավական բարձր շեմ՝ փաստական հանգամանքների բավարար ամբողջության առկայություն և դատարանի կողմից դրանց պատճառաբանված հաստատում (Օրենսգրքի 118-րդ հոդված, 4-րդ մաս): Այլընտրանքային խափանման միջոցների մասով անհրաժեշտության ապացուցվածության շեմն ավելի ցածր է և գտնվում է ողջամիտ ենթադրությունների տիրույթում (Օրենսգրքի 122-րդ հոդված, 5-րդ մաս): Այնուա-

մենայնիվ, ողջամիտ ենթադրությունը, ի տարբերություն «սովորական» ենթադրության, ունի որոշակի փաստական, օբյեկտիվ հիմք, որի ուժով էլ օժտված է ողջամտության հատկանիշով և նվազ վերացարկված է իրականությունից: Անհրաժեշտ է նշել, որ «ենթադրություն» եզրույթը, ըստ ձևավորված իրավակիրառ պրակտիկայի, այդ թվում՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների, ևս դիտարկվում է քրեական վարույթով (գործով) ձեռք բերված *որոշակի նյութերով հիմնավորվող* «կանխատեսական ռիսկի» գնահատման տիրույթում (տե՛ս, օրինակ, Արամ Սեյրանի Ճուղուրյանի վերաբերյալ թիվ ՎԲ-132/07 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը):

Այլ հարց է, թե քրեական վարույթի նյութերում առկա ո՞ր փաստական տվյալները կարող են հիմք հանդիսանալ խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը հիմնավորելու համար, ո՞րն է հանդիսանում մեղադրյալի հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի ողջամիտ ենթադրության ձևավորման աղբյուրը:

Քննարկվող հարցին իր նախադեպային որոշումներում անդրադարձ է կատարել ՀՀ վճռաբեկ դատարանը: Օրինակ՝ թիվ ԵԴ/0548/06/19 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանն իր 25.12.2020 թվականի որոշմամբ նշել է. «Վճռաբեկ դատարանը կրկին փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները բոլոր դեպքերում պետք է պայմանավորված լինեն գործի նյութերից բխող որոշ փաստական տվյալներով: (...) Հետևաբար խնդրո առարկա հարցը լուծելիս դատարանի հետևությունները յուրաքանչյուր դեպքում պետք է հիմնված լինեն գործի նյութերում առկա ապացույցների, փաստերի կամ այլ տեղեկությունների, այդ թվում՝ քրեական օրենքով արգելված ենթադրյալ հանցանքի կատարման պահից ի վեր մեղադրյալի դրսևորած վարքագծի և նրա անձը բնութագրող այլ հատկանիշների՝ իրենց ամբողջության մեջ գնահատման վրա»:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը խափանման միջոցի կիրառման անհրաժեշտության գնահատման հարցում շեշտը դնում է վարույթն իրականացնող մարմնի կողմից այնպիսի փաստական տվյալների գնահատման անհրաժեշտության վրա, որոնք անմիջականորեն վերաբերում են մեղադրյալի վարքագծին և անձնական հատկանիշներին: Առնվազն քրեական վարույթի նյութերից բխող փաստերը, ապացույցները պետք է քննարկվեն մեղադրյալի անձի և նրա վարքագծի հետ համակցված:

Այդ մասին վկայող կարծիքներ առկա են նաև իրավական դոկտորինում: Օրինակ՝ Ն. Գ. Նարբիկովան «խափանման միջոցներ կիրառելու հիմքեր» ասելով հասկանում է այնպիսի հանգամանքներ, որոնք 1) ուղղակիորեն վկայում են կասկածյալի, մեղադրյալի ոչ պատշաճ վարքագծի մասին կամ 2) այնպիսի բավարար փաստական տվյալների համակցություն, որոնք

հաստատում են մեղադրյալի (կասկածյալի) նման վարքագծի հնարավորությունը<sup>1</sup>:

Այսինքն, խափանման միջոցի կիրառման հիմք կարող է հանդիսանալ 1) կա՛մ անմիջականորեն մեղադրյալի (այլ երկրների իրավունքում նաև՝ կասկածյալի) կողմից որոշակի բացասական վարքագծի դրսևորումները, 2) կա՛մ էլ պետք է մեղադրյալի նման (հնարավոր) վարքագծի վերաբերյալ առկա լինեն բավարար փաստական տվյալներ:

Որպես առաջին հիմքի դրսևորում պետք է հասկանալ վարույթն իրականացնող մարմնի կողմից արձանագրված անմիջականորեն մեղադրյալի այնպիսի ակտիվ կամ պասիվ վարքագիծը, պոզիտիվ կամ նեգատիվ պարտականությունների չկատարումը, որը թույլ է տալիս արձանագրելու խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը: Օրինակ՝ մեղադրյալի կողմից տուժողի կամ վկայի նկատմամբ ճնշում գործադրելը, վարույթն իրականացնող մարմնի պահանջով չներկայանալը և այլն: Երկրորդ դեպքը վերաբերում է մեղադրյալի հետ կապված օբյեկտիվ իրականությունում առկա այնպիսի հանգամանքների, որոնք հնարավոր և իրատեսական են դարձնում մեղադրյալի ոչ իրավաչափ վարքագիծը: Օրինակ՝ մեղադրյալը սեփականություն ունի արտերկրում, ինչը կարող է վկայել նրա կողմից հնարավոր փախուստի մասին, կամ մեղադրյալի՝ հանցավոր շրջանակներում ներգրավվածությունը, որոշակի հեղինակություն կամ ազդեցություն ունենալը, որի շնորհիվ մեղադրյալը կարող է ազդել վարույթի բնականոն ընթացքի վրա: Նման հանգամանքները, ինչպես տեսնում ենք, ևս մեղադրյալի անձի հետ ուղղակիորեն կապված են: Փաստում ենք նաև, որ երկրորդ դեպքում խոսքը գնում է մեղադրյալի հնարավոր վարքագծի վերաբերյալ բավարար փաստական տվյալների մասին, ուստի վարույթն իրականացնող մարմնի հետևությունները պետք է ամրապնդվեն նման տվյալների, հանգամանքների համակցությամբ:

Եթե փորձ կատարենք ուսումնասիրելու այլ երկրների քրեադատավարական օրենսդրությունը ևս, ապա կարձանագրենք, որ, օրինակ, ԳԴՀ քրեական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ կալանավորման հիմքերն առկա են, եթե որոշակի փաստերի հիման վրա մեղադրյալի վարքագիծը հիմնավոր (խիստ) կասկած է հարուցում, որ նա ա) կոչնչացնի, կփոփոխի, կհեռացնի, կճնշի կամ կկեղծի ապացույցները կամ բ) անպատշաճ կերպով կազդի այլ մեղադրյալների, վկաների կամ փորձագետների վրա կամ գ) կստիպի ուրիշներին դա անել<sup>2</sup>:

<sup>1</sup> Нарбикова Н.Г. Меры пресечения, связанные с ограничением свободы: дис. канд. юрид. наук. – Оренбург, 2005. – С. 62.

<sup>2</sup> Code of Criminal Procedure in the version published on 7 April 1987 (Federal Law Gazette I, p. 1074, 1319), as last amended by Article 6 of the Act of 21 February 2024 (Federal Law Gazette 2024 I, No. 54), [www.gesetze-im-internet.de/englisch\\_stpo/englisch\\_stpo.html#p1062](http://www.gesetze-im-internet.de/englisch_stpo/englisch_stpo.html#p1062)

Այս դեպքում ևս փաստում ենք, որ կալանավորման (ինչպես և այլ խափանման միջոցների) հիմքերի առկայությունը հաստատելու համար նախապայման է հանդիսանում քրեական վարույթի նյութերում որոշակի ապացույցների, փաստերի առկայությունը, որոնք բխում են անձամբ և կոնկրետ մեղադրյալի վարքագծից, որն էլ կարող է փաստական հանգամանքների բավարար ամբողջություն (ողջամիտ ենթադրություն) ձևավորել մեղադրյալի կողմից քրեական վարույթի բնականոն ընթացքը խոչընդոտող հակաիրավական գործողությունների կատարման հավանականության վերաբերյալ:

Ամբողջացնելով ողջ վերոգրյալը՝ կարևոր է արձանագրել, որ այն դեպքերում, երբ մեղադրյալի կողմից ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման հնարավոր ռիսկը վարույթն իրականացնող մարմնի կողմից հիմնավորվում է այլ անձանց վարքագծով, և բացակայում են մեղադրյալի կողմից ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման հնարավորության մասին վկայող բավարար փաստեր, ապացույցներ, անմիջականորեն մեղադրյալի անձը բնութագրող հատկանիշները ևս հիմք չեն տալիս վարույթն իրականացնող մարմնին եզրակացնելու խափանման միջոցի կիրառման անհրաժեշտության և նպատակի առկայության վերաբերյալ, վարույթն իրականացնող մարմինն, ըստ էության, մեղադրյալի կողմից ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման և նրա նկատմամբ խափանման միջոցի կիրառման անհրաժեշտության վերաբերյալ դատողությունները կառուցում է բացառապես այնպիսի ենթադրությունների վրա, որոնք չեն հաղթահարում անգամ խափանման միջոցի կիրառման անհրաժեշտության վերաբերյալ կանխատեսական եզրակացությունների (ողջամիտ ենթադրությունների) շեմը: Եթե անմիջականորեն մեղադրյալի վարքագիծը և/կամ նրա անձը բնութագրող հատկանիշներն օբյեկտիվորեն հնարավորություն չեն տալիս վարույթն իրականացնող մարմնին եզրակացություն կատարել մեղադրյալի հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի վերաբերյալ, ապա մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հնարավորությունը ևս պետք է բացառվի:

Այլ է իրավիճակն այն պայմաններում, երբ մեղադրյալն իր գործողություններով, հայտարարություններով ուղղակի կամ անուղղակի կերպով այնպիսի վերաբերմունք է ցուցաբերում այլ անձանց վարքագծի նկատմամբ, որը վարույթն իրականացնող մարմնի մոտ ձևավորում է այն համոզմունքը/ողջամիտ ենթադրությունը, որ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունն առկա է: Օրինակ՝ վարույթն իրականացնող մարմնին հայտնի է դառնում, որ այլ անձի կողմից պլանավորվում է մեղադրյալի փախուստը, իսկ մեղադրյալը դրսևորում է այնպիսի վարքագիծ, որով ստեղծում է իր հնարավոր փախուստի վերաբերյալ կասկած (փոխում է բնակության վայրը, չի ներկայանում վարույթն իրականացնող մարմնի պահանջով և այլն): Կամ, օրինակ, այլ անձը սպառնալիքներ է հնչեցնում տուժողի կամ վարույթի այլ մասնակիցների նկատմամբ, մեղադրյալն էլ իր

հերթին միանում է սպառնալիքներին՝ բանավոր հայտարարությունների կամ ակտիվ գործողությունների եղանակով՝ ստեղծելով վարույթի մասնակիցների վրա անօրինական ներգործություն ունենալու եղանակով վարույթի բնականոն ընթացքը խոչընդոտելու վերաբերյալ ողջամիտ ենթադրություն: Հենց մեղադրյալի նմանօրինակ վարքագիծն է ստեղծում այն փաստական հիմքը, որը վարույթն իրականացնող մարմինն հնարավորություն է տալիս արձանագրելու խափանման միջոցի կիրառման անհրաժեշտության և հետապնդվող նպատակի առկայությունը: Օբյեկտիվորեն հնարավոր են դեպքեր, երբ այլ անձինք, օրինակ, պլանավորում են մեղադրյալի փախուստը՝ առանց նրա իմացության և այն պայմաններում, երբ ինքը՝ մեղադրյալը, փախուստին միտված որևէ վարքագիծ չի դրսևորում, պատշաճ ներկայանում է վարույթն իրականացնող մարմնի պահանջով և այլն: Նման հնարավոր իրավիճակներում որպես կանխարգելիչ միջանկյալ միջոց պետք է հանդիսանա վարույթն իրականացնող մարմնի զգոնության ավելացումը, այլ ոչ թե փաստական հիմքով չամրապնդված, վերացական դատողությունների հիման վրա մեղադրյալի իրավունքների սահմանափակումը: Նշված մոտեցումը բխում է նաև հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համաչափության սկզբունքից, որի մասին մանրամասն կներկայացվի հոդվածի 2-րդ բաժնում:

Նման մոտեցում է որդեգրել նաև ՄԻԵԴ-ն իր որոշումներում: Մասնավորապես, նշվում է, որ առհասարակ անձի ոչ պատշաճ վարքագծի վերաբերյալ դատողությունները չեն կարող որպես հիմք ընդունվել վերացական ձևով (in abstracto), դրանք պետք է հիմնավորվեն ապացույցներով: Կոնվենցիայի հետ անհամատեղելի են այնպիսի իրավիճակները, երբ մեղադրող կողմը կատարում է ենթադրություններ կամ չհիմնավորված հայտարարություններ, և պաշտպանվող կողմի վրա է դրվում փախչելու կամ արդարադատության իրականացմանը խոչընդոտելու վերաբերյալ արված հայտարարությունների հերքման պարտականությունը (տե՛ս, ի թիվս այլնի, Trzaska v. Poland, գանգատ թիվ 25982/94, 2000 թվականի հուլիսի 11-ի վճիռը, Becciev v. Moldova, գանգատ թիվ 9190/03, 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, Zayidov v. Azerbaijan, գանգատ թիվ 11948/08, 2014 թվականի փետրվարի 20-ի վճիռը, Merčep v. Croatia, գանգատ թիվ 12301/12, 2016 թվականի ապրիլի 26-ի վճիռը):

Իրավական դոկտրինում նույնպես տարածված է համոզմունքն առ այն, որ խափանման միջոցի կիրառման հիմքի առկայությունը և իրավաչափությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա: Որոշ հեղինակներ անգամ գտնում են, որ խափանման միջոցի կիրառման որոշման հիմքում պետք է դրվեն բացառապես հստակ փաստեր և այդ փաստերը հիմնավորող ապացույցներ, վարույթն իրականացնող մարմինն իրավունք չունի հիմնվել

ենթադրությունների վրա և կատարել կանխատեսական եզրակացություններ<sup>1</sup>: Չբացառելով վարույթն իրականացնող մարմնի կողմից հատկապես մինչդատական վարույթի շրջանակներում խափանման միջոցների կիրառման հարցի քննարկման համատեքստում նաև որոշակի կանխատեսական եզրակացություններով (ողջամիտ ենթադրություններով) առաջնորդվելու չափավոր հնարավորությունը՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր է վարույթի տվյալ փուլում դեռևս բացահայտված չլինի հարցի քննարկման համար էական նշանակություն ունեցող ապացույցների ամբողջ ծավալը, այնուամենայնիվ գտնում ենք, որ կանխատեսական եզրակացությունները ևս պետք է բխեն անմիջականորեն մեղադրյալի և նրա վարքագծի վերաբերյալ վարույթի նյութերում առկա փաստական տվյալներից և ձեռք բերված ապացույցներից, որոնց հիման վրա էլ վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կունենա ողջամիտ ենթադրությունների մակարդակում կանխատեսել մեղադրյալի հնարավոր ոչ իրավաչափ վարքագիծը: Նման կանխատեսումը չպետք է այնքան վերացարկված լինի մեղադրյալի անձից, նրա վարքագծից և դրանց վերաբերյալ գործի նյութերում առկա ապացույցներից, որ վարույթն իրականացնող մարմնի որոշումը կառուցվի զուտ հիպոթետիկ, պաշտպանության կողմի համար ամբողջապես անկանխատեսելի, անհաղթահարելի եզրակացությունների վրա:

Ն. Ա. Սիմագինան իրավացիորեն արձանագրում է, որ եթե առկա է տեղեկատվության պակաս այն հանգամանքների մասին, որոնք պետք է հաշվի առնվեն խափանման միջոցի ընտրության հարցը լուծելիս, քննիչն իրավունք ունի կատարել քննչական գործողություններ՝ ուղղված նման հանգամանքները պարզելուն: Սա հնարավորություն կտա բացահայտել այնպիսի հանգամանքներ, որոնք խափանման միջոց ընտրելու ընդհանուր հիմքերի առկայության հետ մեկտեղ թույլ կտան անհատական մոտեցում ցուցաբերել մեղադրյալի նկատմամբ<sup>2</sup>:

Այս դեպքում ևս փաստում ենք խափանման միջոցների կիրառման անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքների և մեղադրյալի անձի անխզելի կապը՝ արդեն նաև մեղադրյալի նկատմամբ անհատական մոտեցման ցուցաբերման համատեքստում, ինչը հանդիսանում է իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքի բաղադրատարրերից մեկը:

<sup>1</sup> Ст'я Куликов М.А. Меры пресечения по законодательству Российской Федерации и иных государств романо-германской правовой семьи (континентальной системы права). Специальность: 12.00.09 - уголовный процесс. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, էջ 98, հղում 219:

<sup>2</sup> Симагина Н.А. Меры пресечения и обстоятельства, учитываемые при их избрании: Учебное пособие. - С. 89.

## **2) Այլ անձի վարքագծով պայմանավորված՝ մեղադրյալի իրավունքների սահմանափակման համաչափության խնդիրը**

Օրենսգրքում ամրագրված քրեական վարույթի հանրայնության սկզբունքի իմպերատիվ պահանջն այն է, որ անձի իրավունքների և ազատությունների սահմանափակումը համաչափ լինի հակակշիռ հանրային շահերի պաշտպանության նպատակին: Նշված պահանջը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով ամրագրված հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքի քրեադատավարական արտահայտումը:

ՀՀ Սահմանադրական դատարանը, ՍԴՈ-1546<sup>1</sup> որոշման շրջանակներում անդրադառնալով համաչափության սկզբունքին, նշել է, որ որևէ հիմնական իրավունքի սահմանափակում հնարավոր է միայն օրենքով, իսկ համաչափության սկզբունքով պայմանավորված՝ օրենքով հիմնական իրավունքի սահմանափակումներին վերաբերող պահանջները հետևյալն են.

1) սահմանափակման նպատակի լեգիտիմությունը, այն է՝ Սահմանադրությամբ սահմանված լինելը.

2) սահմանափակման համար ընտրված միջոցների՝

ա) պիտանիությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

բ) անհրաժեշտությունը՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

գ) համարժեքությունը սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Այլ անձի վարքագիծը մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հիմքում դնելու դեպքում առավել ցայտուն կերպով հակասությունը դրսևորվում է իրավունքի սահմանափակման համաչափության սկզբունքի պայմաններից անհրաժեշտության և համարժեքության պայմանների հետ:

Այսպես՝ Օրենսգրքի 116-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ խափանման միջոցի տեսակն ընտրելիս հաշվի են առնվում մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող բոլոր հնարավոր հանգամանքները:

Ի տարբերություն ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի՝ Օրենսգիրքը չի նախատեսում մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող հնարավոր հանգամանքների ուղենշային ցանկ: ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է հաշվի առնի այնպիսի

<sup>1</sup> ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 18 հունիսի 2020 թ. ՍԴՈ-1546 որոշումը, [www.concourt.am/decision/decisions/sdv-1546.pdf](http://www.concourt.am/decision/decisions/sdv-1546.pdf)

հանգամանքներ, ինչպիսիք են՝ 1) վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը, 2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը, 3) տարիքը և առողջական վիճակը, 4) սեռը, 5) զբաղմունքի տեսակը, 6) ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը, 7) գույքային դրությունը, 8) բնակության մշտական վայրի առկայությունը, 9) այլ էական հանգամանքներ:

Թեպետև Օրենսգիրքը չի նախատեսում մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող հնարավոր հանգամանքների ուղենշային ցանկ, այդ հանգամանքների բնույթի վերաբերյալ պատկերացում կազմել հնարավոր է թե՛ ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան կարգավորումների, թե՛ բարձր ատյանի դատարանների նախադեպային որոշումների, և թե՛ իրավական դոկտրինի վերլուծության հիման վրա: ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասում տեղ գտած խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության գնահատման հիմք հանդիսացող հանգամանքներից յուրաքանչյուրը վերաբերում է կասկածյալի/մեղադրյալի խիստ անձնական և անհատական հատկանիշներին, նրա վարքագծին (կասկածյալի կամ մեղադրյալի անձը, տարիքը և առողջական վիճակը և այլն): Ենթադրվում է, որ Օրենսգրքով սահմանված՝ «մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող բոլոր հնարավոր հանգամանքներ»-ը ևս պետք է ամենաուղղակի առնչությունն ունենան մեղադրյալի անձին և անհատականությանը և բխեն դրանից, առնվազն օրենսդրի կամքն անկասկած պետք է հիմնված լիներ այդ տրամաբանության վրա:

Հայկական քրեադատավարական դոկտրինում որպես մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հիմք հանդիսացող հնարավոր հակաիրավական վարքագծի (վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու, գործի քննությանը խոչընդոտելու և այլն) մասին վկայող փաստեր են ներկայացվում անմիջականորեն մեղադրյալի վարքագիծը և գործողությունները (վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու դիսկի տեսանկյունից, օրինակ, անձը հաստատող փաստաթղթերը փոխելը, քրեական օրենքով արգելված արարք կատարելու դիսկի տեսանկյունից՝ հանցագործության գործիքներ ձեռք բերելը և այլն)<sup>1</sup>:

Ն. Ա. Սիմագինյան ևս նշում է այն մասին, որ ի թիվս այլ հանգամանքների (օրինակ՝ մեղադրյալի հանցագործության ծանրությունը), խափանման միջոցի կիրառման հարցում կարևոր է հաշվի առնել նաև հենց մեղադրյալի անհատական հատկանիշները: Այսպես՝ նշվում է, որ տնային կալանքի կիրառման անհրաժեշտությունն ու իրավաչափությունը գնահատելիս, բացի հանցագործության ծանրության հանգամանքից, պետք է ուշադրություն դարձնել մեղա-

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Մաս 1: Հեղ. խումբ, գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Եր., Տիգրան Մեծ, 2016, էջեր 521-523:

դրյալի անձնական հատկանիշներին (օրինակ՝ դատավճռության առկայություն, հաջորդող հակասոցիալական վարքագիծ և այլն), և հնարավոր է, որ մեղադրյալի անհատական հատկանիշների «հավաքածուն» էական ազդեցություն ունենա խափանման միջոցի ընտրության հարցի լուծման համար<sup>1</sup>:

Ստացվում է, որ ինչպես և ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումներում, այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում և իրավունքի դոկտրինում անձի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելիս վարույթն իրականացնող մարմնի ուշադրությունը հրավիրվում է անմիջականորեն մեղադրյալի դրսևորած վարքագծի, նրա անհատական և անձը բնութագրող հատկանիշների՝ որպես խափանման միջոցի կիրառման նպատակի առկայությունն ու իրավաչափությունը հիմնավորող փաստերի վրա: Սրանով ապահովվում է նաև մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցի «անհատականացումը»: Դատավարության ցանկացած այլ մասնակցի կամ այլ անձանց (այդ թվում՝ մեղադրյալի հետ առնչություն ունեցող) դրական կամ բացասական վարքագիծը, նրանց անձը բնութագրող հանգամանքները չեն կարող և չպետք է դրվեն մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու նպատակի առկայությունը և խափանման միջոցի իրավաչափությունը հիմնավորելու կամ հերքելու հիմքում: Խափանման միջոցի կիրառումը միտված է հենց մեղադրյալի ոչ իրավաչափ վարքագիծը նախականելուն կամ կանխելուն, ուստի մեղադրյալի կողմից որոշակի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման հնարավորությունը հաստատող կամ հերքող փաստերը պետք է անմիջականորեն բխեն տվյալ մեղադրյալի գործողություններից, նրա անձը բնութագրող հատկանիշներից, որն էլ հենց թույլ կտա մեղադրյալի վարքագծից և անձից բխող ռիսկերին համապատասխան և համաչափ խափանման միջոց ընտրելու:

Հակառակ մեկնաբանման պարագայում, առաջին հերթին, անհամապատասխանություն է առաջանում իրավունքների սահմանափակման անհրաժեշտության պայմանի հետ: Այսպես՝ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1546 որոշման շրջանակներում անհրաժեշտությունը բնորոշվում է որպես նույն ներգործությամբ այլ միջոցների համեմատ իրավունքի ամենամեղմ սահմանափակում ենթադրող միջոցի կիրառում: Սահմանադրական դատարանի քննարկվող որոշման մեջ նշվում է. «(...) Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու բոլոր պիտանի միջոցներից պետք է ընտրվի այն օրենսդրական միջոցը, որը նպատակին հասնելու նույն հավանականությամբ, այսինքն՝ նույն արդյունավետությամբ, սակայն առավել մեղմ է սահմանափակում որևէ հիմնական իրավունք կամ ազատություն: (...)»:

<sup>1</sup> Симагина Н.А. Меры пресечения и обстоятельства, учитываемые при их избрании: Учебное пособие. - С. 60.

Եվս մեկ անգամ շեշտենք, որ անմիջականորեն մեղադրյալի կողմից ոչ իրավաչափ, վարույթի բնականոն ընթացքը խոչընդոտող վարքագիծ չդրսևորելու դեպքում, անգամ եթե նման վարքագիծ դրսևորվում է այլ անձանց կողմից, բացակայում է մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառմամբ վերջինիս իրավունքների սահմանափակման անհրաժեշտությունը: Եթե դատավարության այլ մասնակիցներ կամ այլ անձինք քրեական դատավարության շրջանակներում դրսևորում են ոչ իրավաչափ վարքագիծ, դատարանն օժտված է տվյալ անձանց նկատմամբ Օրենսգրքի 17-րդ գլխով նախատեսված դատավարական սանկցիաներից որևէ մեկը կիրառելու իրավասությամբ, ինչպես նաև տվյալ անձանց արարքներում հանցակազմի տարրերի առկայության դեպքում ձեռնամուխ լինելու վերջիններիս քրեական պատասխանատվության ենթարկելուն, ինչով էլ հենց կզսպվի այդ անձանց ոչ իրավաչափ վարքագիծը՝ միևնույն ժամանակ առանց անհարկի սահմանափակելու մեղադրյալի իրավունքները, եթե այլ անձանց ոչ իրավաչափ գործողությունները չեն ուղեկցվում մեղադրյալի հակաիրավական վարքագծով, նրանց գործողությունների հետ համաձայնությամբ (տե՛ս հոդվածի նախորդ բաժնում ներկայացված օրինակները):

Նույնն է իրավիճակը իրավունքների սահմանափակման համարժեքության պայմանի տեսանկյունից: Համարժեքությունը ենթադրում է սահմանափակվող իրավունքի և հանրային շահի միջև հավասարակշռության ապահովման պահանջ, որի համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) որևէ հիմնական իրավունքի կամ ազատությանը չմիջամտելը կամ այն երաշխավորելը, կախված դրանց էությունից, կանոն է, իսկ դրա սահմանափակումը՝ բացառություն, որը պետք է հիմնավորվի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում: Ընդսմին, որքան ավելի ինտենսիվ է սահմանափակումը, այնքան ավելի է մեծանում սահմանափակումը հիմնավորելու բեռը: (...)»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Khodorkovskiy v. Russia գործի շրջանակներում ևս անդրադարձել է խափանման միջոցների կիրառմամբ անձի իրավունքների սահմանափակման հարցին և հենց միջամտության համաչափության տեսանկյունից նշել, որ ազգային դատարանները պարտավոր են քննարկել հանրային շահի իրական առկայությունը հաստատող կամ հերքող բոլոր հանգամանքները՝ հարցը դիտարկելով նաև անմեղության կանխավարկածի լույսի ներքո: Դատարանի դատողությունները չպետք է լինեն ընդհանրական և վերացական, այլ պետք է պարունակեն հղումներ հատուկ փաստերի և մեղադրյալի անձնական հանգամանքների վերաբերյալ: Այս համատեքստում եվրոպական դատարանը քննարկվող որոշման մեջ ևս կարևորում է հատկապես մեղադրյալի բնավորության, բարքերի, ֆինանսների, պետության հետ և միջազգայնորեն ունեցած կապերին

ուշադրություն դարձնելու հանգամանքը (տե՛ս Khodorkovskiy v. Russia application no. 5829/04, 31.05.2011 թ., 185):

Գտնում ենք, որ որքան խափանման միջոցի կիրառմամբ ավելի ինտենսիվորեն են սահմանափակվում մեղադրյալի անձնական ազատության, ազատ տեղաշարժի և այլ սահմանադրական իրավունքները, այնքան ավելի խոցելի և անթույլատրելի է դառնում ոչ անմիջականորեն մեղադրյալի անձից բխող հանգամանքների վկայակոչմամբ հանրային շահի պաշտպանության անհրաժեշտության հիմնավորումը՝ հանգեցնելով նաև համարժեքության պայմանի խախտման: Մարդու իրավունքին չմիջամտելու կանոնից բացառություն չի կարող արվել այն դեպքերում, երբ վերջինիս անձը և վարքագիծը թույլ չեն տալիս արձանագրելու նրա իրավունքների սահմանափակման եղանակով հանրային շահի պաշտպանության անհրաժեշտությունը:

Ամբողջ վերոգրյալի հիման վրա փաստում ենք, որ այլ անձանց վարքագծի հիման վրա մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցների կիրառումն ուղիղ հակասության մեջ է գտնվում համաչափության սահմանադրական և հանրայնության քրեադատավարական սկզբունքների հետ:

### **3) Այլ անձի վարքագծով պայմանավորված՝ մեղադրյալի իրավունքների սահմանափակման որոշակիության խնդիրը**

Այլ սուբյեկտների գործողությունները համարելով մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հիմք՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից, ի թիվս այլնի, խախտվում է նաև ՀՀ սահմանադրությամբ ամրագրված որոշակիության սկզբունքը:

Այսպես՝ ՀՀ սահմանադրական դատարանը, ՍԴԴ-1546 որոշման շրջանակներում անդրադառնալով որոշակիության սկզբունքին, նշել է. «(...) հիմնական իրավունքները կամ ազատությունները սահմանափակող օրենքների հստակությունը, կանխատեսելիությունը և մատչելիությունն ուղիղ համեմատական են հիմնական իրավունքի սահմանափակման աստիճանին. որքան ավելի ինտենսիվ է այդ սահմանափակումը, այնքան ավելի հստակ, կանխատեսելի և մատչելի պետք է լինեն հիշյալ օրենքների ձևակերպումները, որպեսզի երկիմաստություն չառաջացնեն մասնավոր անձանց համար արգելքների, այլ սահմանափակումների կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում: (...)»:

Տվյալ դեպքում, անդրադառնալով քրեական վարույթի շրջանակներում անձի նկատմամբ խափանման միջոցների կիրառմանը հիմնական իրավունքի սահմանափակման աստիճանի համատեքստում՝ պետք է փաստել, որ անձի նկատմամբ խափանման միջոցների կիրառմամբ, կախված ընտրված խափանման միջոցի տեսակից, տարբեր ինտենսիվությամբ սահմանափակվում են անձի անձնական ազատության, ազատ տեղաշարժի և այլ հիմնական իրավունքներն այն պայմաններում, երբ անձի վերաբերյալ դեռևս

առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, գործում է անմեղության կանխավարկածը: Ստացվում է, որ հատկապես անձի անձնական ազատության նկատմամբ խիստ միջամտություն ենթադրող խափանման միջոցների կիրառման հիմքերը պետք է անձի համար հնարավորինս հստակ, կանխատեսելի ու մատչելի լինեն, քանզի դրանք իրենցից ենթադրում են հիմնական իրավունքի սահմանափակման բարձր ինտենսիվություն՝ առավել ևս հաշվի առնելով անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չլինելու հանգամանքը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայում ևս կարևորվում է իրավական որոշակիության սկզբունքի պահպանումը անձի իրավունքների սահմանափակման համատեքստում: Այսպես՝ եվրոպական դատարանը նշում է, որ կարևոր է անձի ազատության իրավունքի սահմանափակման հիմքերը հստակ սահմանված լինեն օրենքում, իսկ օրենքի կիրառումը պետք է լինի կանխատեսելի, որպիսի պարագայում միայն կպահպանվի իրավունքի սահմանափակման՝ Կոնվենցիայում ամրագրված օրինականության սկզբունքը: Օրենքը պետք է լինի բավականաչափ հստակ՝ թույլ տալով անձին գնահատելու իր արարքների հնարավոր հետևանքները (տե՛ս, օրինակ, եվրոպական դատարանի որոշումները՝ *Del Río Prada v. Spain* [GC], § 125; *Creangă v. Romania*, § 120; *Medvedyev and Others v. France* [GC], § 80):

Ո՛չ մեղադրյալը, ո՛չ էլ այլ անձինք ողջամտորեն չեն էլ կարող ենթադրել, որ այլ անձանց վարքագիծը քրեական դատավարության շրջանակներում կարող է բացասական հետևանքներ առաջացնել մեղադրյալի համար, առավել ևս դրվել խափանման միջոցի կիրառման հիմքում, քանզի Օրենսգիրքը նման հնարավորություն չի նախատեսում: Ավելին, այլ անձանց վարքագիծը ամբողջապես դուրս է մեղադրյալի վերահսկողության դաշտից, կանխատեսելի չէ վերջինիս համար, ուստի նման պայմաններում ոչ իրավաչափ է այլ անձանց հակաիրավական վարքագծի բեռը մեղադրյալի վրա դնելու, վերջինիս իրավունքներն այլ անձանց վարքագծով պայմանավորված սահմանափակելու մոտեցումը:

Առհասարակ, քրեաիրավական և քրեադատավարական ներգործության/պատասխանատվության միջոցների կիրառումը, անձի իրավունքների սահմանափակումը մշտապես պայմանավորված է եղել տվյալ անձի արարքներով: Խափանման միջոցի կիրառմամբ հետապնդվող նպատակների օրենսդրական ձևակերպումները ևս թույլ են տալիս հստակ արձանագրել անձարարք-հետևանք կապի առկայությունը: Եթե մեղադրյալը (անձ) կատարում է այնպիսի գործողություններ, դրսևորում է անգործություն կամ այլ վարքագիծ (արարք), որի հիման վրա վարույթն իրականացնող մարմինը հաստատված է համարում խափանման միջոցների կիրառման անհրաժեշտությունը, ապա

մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել խափանման միջոցներ (հետևանք):

Եթե անգամ տեսականորեն պատկերացնենք, որ այլ անձանց վարքագիծը մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հիմք դիտարկելը հակասության մեջ չէ իրավունքի մի շարք այլ, այդ թվում՝ սույն հոդվածի շրջանակներում քննարկված համաչափության, վարույթի հանրայնության սկզբունքների հետ, ապա առնվազն որոշակիության սկզբունքի ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է այդ հնարավորությանը տալ օրենսդրական ամրագրում, իսկ քրեական դատավարության շրջանակներում էլ վարույթն իրականացնող մարմինը պետք է նախազգուշացնի վարույթի մասնակիցներին և այլ անձանց, որ իրենց վարքագիծը կարող է հանգեցնել մեղադրյալի համար բացասական հետևանքների՝ ընդհուպ մինչև խափանման միջոցի կիրառման տեսքով: Նման օրենսդրական կարգավորման նախատեսումն, իհարկե, ողջամիտ ու իրատեսական չէ, հատկապես հաշվի առնելով նման մոտեցման և իրավունքի այլ սկզբունքների միջև հակասությունների վերաբերյալ սույն հոդվածի նախորդ բաժիններում ներկայացված հիմնավորումները:

### **Ամփոփում**

Ամփոփելով գտնում ենք, որ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հարցի շրջանակներում մեղադրյալի հնարավոր հակաիրավական վարքագծի վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի դատողությունները պետք է հիմնվեն քրեական վարույթի նյութերում առկա այնպիսի ապացույցների (փաստական տվյալների) վրա, որոնք անմիջականորեն վերաբերում են մեղադրյալի անձին, նրա վարքագծին. վարույթն իրականացնող մարմինն այլ անձանց վարքագծի հիման վրա չպետք է որևէ կերպ, ուղղակի կամ անուղղակի կերպով, հիմնավորի մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը: Վարույթն իրականացնող մարմինը խափանման միջոցի կիրառման հարցը քննարկելիս պետք է առաջնորդվի քրեական դատավարության հանրայնության սկզբունքի, համաչափության և որոշակիության սահմանադրական սկզբունքների պահանջներով, մեղադրյալի հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի վերաբերյալ ռիսկերը և դրանք զսպելու անհրաժեշտությունը բխեցնի մեղադրյալի անձից և նրա վարքագծից:

## Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, դատական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, 22.12.2015 թ. ուժի մեջ մտած խմբագրությամբ:
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 01.07.1998 թ. ընդունված, 01.07.2022 թ. ուժը կորցրած:
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 30.06.2021 թ. ընդունված:
4. Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, 07.04.1987 թ. հրապարակված, 21.02.2024 թ. խմբագրությամբ:
5. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 18 հունիսի 2020 թ. ՍԴՈ-1546 որոշում:
6. Արամ Սեյրանի Ճուղուրյանի վերաբերյալ թիվ ՎԲ-132/07 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.08.2007 թ. որոշում:
7. Վալերի Հակոբյանի վերաբերյալ թիվ ԵԴ/0548/06/19 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2020 թ. որոշում:
8. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Trzaska v. Poland, գանգատ թիվ 25982/94, 2000 թվականի հուլիսի 11-ի վճիռ, Becciev v. Moldova, գանգատ թիվ 9190/03, 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռ, Zayidov v. Azerbaijan, գանգատ թիվ 11948/08, 2014 թվականի փետրվարի 20-ի վճիռ, Merčep v. Croatia, գանգատ թիվ 12301/12, 2016 թվականի ապրիլի 26-ի վճիռ:
9. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Khodorkovskiy v. Russia գանգատ թիվ 5829/04, 31.05.2011 թ. վճիռ:
10. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Del Río Prada v. Spain [Մեծ պալատ]; Creangă v. Romania; Medvedyev and Others v. France [Մեծ պալատ] վճիռներ:
11. **Ղամբարյան Ա.Ա.**, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Մաս 1: Հեղ. խումբ, գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Եր., Տիգրան Մեծ, 2016, 629 էջ:
12. **Нарбикова Н.Г.** Меры пресечения, связанные с ограничением свободы: дисс. канд. юрид. наук, из фондов Российской государственной библиотеки. - Оренбург, 2005, 197 էջ:
13. **Куликов М.А.** Меры пресечения по законодательству Российской Федерации и иных государств романо-германской правовой семьи (континентальной системы права). Специальность: 12.00.09 - уголовный процесс. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. - Москва, 2020. - 230 էջ:

14. **Симагина Н.А.** Меры пресечения и обстоятельства, учитываемые при их избрании: Учебное пособие. Владимирский государственный университет имени Александра Григорьевича и Николая Григорьевича Столетовых, 2021. - 180 էջ:

## ПРАВОМЕРНОСТЬ ПРИМЕНЕНИЯ МЕРЫ ПРЕСЕЧЕНИЯ В ОТНОШЕНИИ ОБВИНЯЕМОГО НА ОСНОВАНИИ ПОВЕДЕНИЯ ДРУГОГО ЛИЦА

### Аннотация

В рамках статьи рассматривается правомерность применения меры пресечения в отношении обвиняемого в тех случаях, когда необходимость применения меры пресечения обосновывается не поведением обвиняемого, а поведением другого лица. Признавая, что такой подход является неправомерным, и с целью исключить подобные ситуации в практике, а также неоправданные ограничения прав обвиняемого, в статье представлены аргументы, которые обосновывают недопустимость такого подхода.

Обосновывается, что основанием для применения меры пресечения в отношении обвиняемого не может быть поведение другого лица, поскольку это противоречит как принципам и нормам Уголовно-процессуального кодекса Республики Армения, так и позиции Европейского суда по правам человека, а также прецедентному праву Кассационного суда Республики Армения, принципам правовой определенности и соразмерности, закрепленным Конституцией Республики Армения.

Согласившись с позицией, выраженной в этом вопросе Апелляционным уголовным судом Республики Армения, и развивая эту позицию с использованием сравнительно-правового, системного и других методов толкования, авторы утверждают, что поведение другого лица не может быть основанием для применения меры пресечения в отношении обвиняемого ни в каком случае - ни прямо, ни косвенно.

**Ключевые слова:** мера пресечения, поведение обвиняемого, принцип определенности, принцип соразмерности.

## LEGALITY OF APPLYING A PREVENTIVE MEASURE AGAINST THE ACCUSED BASED ON THE BEHAVIOR OF ANOTHER PERSON

### Annotation

This article discusses the legality of applying a preventive measure against the accused in cases where the necessity for such a measure is justified not by the behavior of the accused, but by the behavior of another person. Acknowledging that such an approach is unlawful and aiming to eliminate similar situations in practice, as well as to avoid unjustified restrictions on the rights of the accused, the article presents arguments that justify the inadmissibility of this approach.

It is argued that the behavior of another person cannot be the basis for applying a preventive measure against the accused, as this contradicts both the principles and norms of the Criminal Procedure Code of the Republic of Armenia, the positions of the European Court of Human Rights, as well as the case law of the Court of Cassation of the Republic of Armenia, and the principles of legal certainty and proportionality enshrined in the Constitution of the Republic of Armenia.

Agreeing with the position expressed by the Criminal Court of Appeal of the Republic of Armenia on this matter, and further developing this stance through comparative legal analysis, systematic interpretation, and other interpretative methods, the authors assert that the behavior of another person cannot, under any circumstances - whether directly or indirectly - serve as a valid justification for applying a preventive measure against the accused.

**Keywords:** preventive measure, behavior of the accused, principle of certainty, principle of proportionality.

*Հոդվածը հանձնված է խմբագրություն 01.03.2025 թ., տրվել է գրախոսության 11.03.2025 թ., ընդունվել է տպագրության 17.03.2025 թ.:*

1(118)2025

◆ ՏԵՂԵԿԱԿԱՆ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ